«ԵՐԵՎԱՆԻՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆԳԻՏԱԿԱՆԸՆԿ
ԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVANBRANCHOF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-55-75-23

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2021-2022թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ)

ք. Իջևան «22» մարտ, 2022թ.»

№	Նախատեսվող	Խորագիրը/թեման	Անցկանցման	Համառոտ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
1.	Դասընթաց	«Էթիկայի եռօրյա դասընթաց»	Մարտ	Դասընթացը կիրականացնի դասախոս Հովսեփ Մոսվսիսյանը: Նպատակն է ուսանողներին սովորեցնել հաղորդակցման ժամանակ վարվելակարգի սահմանված կանոնները:
2.	Բանահավաքչություն	-	Մարտ-Ապրիլ	Նպատակն է ուսումնասիրել, «պեղել» և հանրությանը ներկայացնել մեր ժողովրդի

				բառն ու բանը: Ուսանողները կհավաքեն ավանդություններ, զրույցներ, երգիծական պատմություններ, խաղիկներ, երգեր, օրհնանքներ, անեծքներ և այլն, որոնց միջոցով աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ տեղեկություններ կփոխանցեն լսարանին:
3.	Ցերեկույթ-միջոցառում	«Եղիշե Չարենց»	Ապրիլ	Քանի որ տարին Չարենցյան է, ուստի ՈՒԳԸ և ՈՒԽ ՀԳՖ անդամների համգործակցությամբ կիրականացվի ցերեկույթ՝ նվիրված բանաստեղծ Եղիշե Չարենցի հիշատակին: Միջոցառմանը ուսանողները կներկայացնեն բանաստեղծի կյանքը, ստեղծագործությունները, կկատարեն բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգերը, այն ուսանողները, ովքեր նախապես գիտական աշխատանքներ գրած կլինեն Չարենցի, նրա ստեղծագործությունների

				մասին, կզեկուցեն:
4.	Դասընթաց-քննարկում	«Նպատակն ու հասնելու ուղիները»	Ապրիլ	Դասընթացը կվարի հոգեբանության ամբիոնի դասախոս Ռ. Աղուզումցյանը: Դասընթացի շնորհիվ ուսանողները լայն պատկերացում կկազմեն «նպատակ» հասկացության և դրան նախորդող ու հաջորդող բարդությունների մասին: Հարցերը կքննարկվեն հոգեբանության դիտանկյունից: Երկրորդ հատվածում կիրականացվի հարց-պատասխան, որի ժամանակ ուսանողները կստանան հետաքրքրող հարցերի պատասխանները:
5.	Գրականությունն ու թատրոնը	-	Մայիս	Կընտրվի որևէ ստեղծագործություն, որի հիման վրա թատերական որևէ ներկայացում կա հայ թատրոնում, կկազմակերպվի այց թատրոն, այնուհետև կկայանա քննարկում և ստեղծագործության հիման վրա կատարված վերլուծությունների միջոցով կհասկանաք գրականության և

				թատրոնի տարբերությունները, նմանությունները, առավելությունները, թերությունները:
6.	Գիտաճանաչողական այց Մատենադարան	-	Մայիս	Ծրագրի ավարտից հետո այն ուսանողները, ովքեր ակտիվ մասնակցություն են ունեցել ՀԳՖ-ի կազմակերպած միջոցառումներին, հնարավորություն կունենան այցելելու Մատենադարան:
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
7.	Մասնագիտական գրքի քննարկում	Հենրի Ֆորդ «Իմ նվաճումները, իմ կյանքը»	Մարտ	Հենրի ֆորդի՝ բոլոր ժամանակների մեծագույն ձեռնարկատերերից մեկի հայտնի գիրքը չափազանց ուսանելի է և մինչև օրս արդիական , որը բացահատում է աշխատանքի, արտադրության ու իրացման արդյունավետ կազմակերպման գաղտնիքները:
8.	Սեմինար-քննարկում	«Ինքնազարգացում և առաջնորդություն»	Մարտ	Կանցկացվի սեմինար-քննարում, որի ժամանակ ձեռնարկատեր Դավիթ Մեջլումյանը կկիսվի իր փորձով և կպատասխանի ուսանողներին հուզող հարցերին:

9.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների հրավիրում	«Կոռուպցիայի կանխարգելման ուղիները»	Ապրիլ	Հանձնաժողովի անդամները կներկայացնեն իրենց գործունեության նպատակները, գրանցված ձեռքբերումները, հաջողությունները: Կպատասխանեն ուսանողներին հուզող հարցերին:
10.	Մասնագիտական գրքի քննարկում	Ջեյմս Ա. Ռոբինսոն- «Ինչու են ձախողվում պետությունները»	Ապրիլ	Գիրքը վերաբերում է պետությունների տնտեսական զագացման պատմությանը: ՀԵղինակը բացատրում է, թե ինչու են ազգերը տարբեր կերպ զարգանում. որոշները հաջողում են, իսկ մյուսները՝ ձախողվում: Նշվում է նաև այն գործոնները, որոնք պատասխանատու են քաղաքական և տնտեսական հաջողության կամ պետությունների ձախողման համար:
11.	Արշավ	«Կիրանցի վանք»	Մայիս	Ուսանողները կայցելեն Կիրանցի վանք, կծանոթանան պատմությանը, հետաքրքիր փաստերի և իրադարձությունների հետ:
12.	Դասընթաց	«Զբոսաշրջային հոգեբանություն»	Մայիս	Դասընթացի ժամանակ կխոսվի հաճախորդների հոգեբանության և գործատու-հաճախորդ կապի մասին:

13.	Մրցույթ	«Լավագույն էսսե»	Մայիս	Արշավին կհաջորդի էսսեների մրցույթը, որին կմասնակցեն արշավականները՝ կիսվելով արշավի տպավորությունների մասին: Լավագույն էսսի հեղինակը կպարգևատրվի:
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
14.	Ինտելեկտուալ խաղ	«Ընդհանուր գիտելիքների ստուգում»	Մայիս	Խաղը նախատեսվում է իրականացնել 3 փուլով: Առաջին փուլում կտրվի 20 հարց: Ավելի բարձր միավոր հավաքած 6 մասնակիցները կանցնեն հաջորդ փուլ: Երկրորդ փուլում կտրվի տրամաբանական հարցեր: Այն 3 մասնակիցները, ովքեր կպատասխանեն առավելագույն թվով հարցերի, կանցնեն երրորդ փուլ: Երրորդ փուլում կտրվի մասնակիցների մասնագիտությանը համապատասխանող հարցեր: Հաղթողի կոչում կստանա այն մասնակիցը, ով կունենա ամենաշատ ճիշտ պատասխանները:
15.	ԷՀՄ-ի դասընթաց	«c++-ի հիմունքներ»	Մարտ 14-ապրիլ 25	Դասընթացի մասնակիցները ձեռք կբերեն c++ ծրագրավորման լեզվի հիմնական գիտելիքներ:

16.	Այց «ԹՈՒՄՈ» նորարարական կենտրոն, Կենտրոնական բանկ	«Ծանոթություն»	Մարտ	Կայցելենք «ԹՈՒՄՈ» կենտրոն, կծանոթանանք անցկացվող դասընթացներին և կտեսնենք ուսանողների աշխատանքները։ Կկատարենք այց Կենտրոնական բանկ։
17.	Այց ԵՊՀ և ֆրանսիական, համալսարաններ	«Ծանոթություն»	Մարտի 28	Այս ծրագրի շրջանակում մասնակիցները կծանոթանան այդ համալսարաններին, այդտեղ գործող բաժիններին և այլն։
18.	Սեմինար-զեկուցում	-	Ապրիլ	Սեմինարի ընթացքում կներկայացվեն հետաքրքիր փաստեր և նորություններ IT ոլորտի մասին
19.	Կոնսուլտացիա	-	Մարտ	Ընթացիկ և վերջնական քննություններից առաջ առարկաների պատրաստում (1-ին և 2-րդ կուրսերի համար)
ՈՒԳԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ				
20.	Աշխատաժողով	«ԵՊՀ Իմ-ի ՈՒսանողական գիտական ընկերության 20-ամյակ»	Մարտ	Աշխատաժողովը նվիրված է ԵՊՀ Իմ ՈՒսանողական գիտական ընկերության 20-ամյակին։ Նպատակն է ուսանողական, գիտական ևս մեկ ծրագիր իրականացնել։ Բանախոսությունների թեմաները հստակեցվելու է պատմության ամբիոնի դասախոս Նաթելլա Գրիգորյանի հետ համագործակցության շրջանակներում։ Բանախոսություններից հետո տեղի կունենա քննարկում՝ հարց ու պատասխան ֆորմատով, և նախատեսվում է իրականացնել մեկ շաբաթվա

				կտրվածքով:
21.	Գիտական շաբաթ	«Հոդված գրելու հմտությունները», «Հետազոտական աշխատանք գրելու հմտությունները», «Դիպլոմային աշխատանք գրելու չափանիշները»	Ապրիլի 9-ին հաջորդող շաբաթը	Տեղի կունենա գիտական շաբաթ, որի ընթացքում դասընթացավար(ներ)ը,, (նախատեսվում է այն իրականացնել պատմուտյան ամբիոնի դասախոս Նաթելլա Գրիգորյանի հետ)կներկայացնի, թե ինչպես ճիշտ գրել հոդվածներ, հետազոտական և դիպլոմային աշխատանքներ, ինչ են դրանք իրենցից ներկայացնում, որն է դրանց կարևորությունը և այլն: Ծրագրի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ և բավարար գիտելիքներ ու հմտություններ: Վերջում կկատարվի հարց և պատասխան ուսանողների և դասընթացավար(ներ)ի միջև:
22.	Մրցույթ	«Հոդվածների մրցույթ»	Ապրիլ	Գիտական շաբաթին կհաջորդի հոդվածների մրցույթը, որի ժամանակ ուսանողները պետք է գիտական շաբաթվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները և հմտությունները ճիշտ օգտագործեն և գրեն հոդվածներ: Հոդված գրելը համալսարանական կարևոր բաղադրիչներից է: Մրցույթում հաղթած ուսանողի հոդվածը կտպագրվի,իսկ ուսանողը կխրախուսվի:
23.	Դասընթաց	«Ինչպես շարունակել կրթությունը արտերկրում»	Մայիս	Դասընթացի ժամանակ կներկայացվեն, թե ինչպես կրթությունը շարունակել արտերկրում կամ ինչպես սովորել արտերկրում:

				Դասընթացի նպատակն է մոտիվացնել ուսանողներին և տալ լրացուցիչ գիտելիքներ։ Վերջում կկատարվի քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով։
24.	Գրադարանային միջոցառում	«Բացահայտենք մեր գրադարանը»	Մայիս	Ծրագրի շրջանակում ուսանողները կարող են այցելել գրադարան, կատարել ուսումնասիրություններ, ծանոթանալ գրադարանի գրականությանը, իրականացնել գրքերի վերադասավորում ։ ՈՒսումնասիրությունը կիրականցվի մեկ ամիս։
25.	Ինտելեկտուալ խաղ	«Ամենախելացին»	Մայիս	Խաղը կընթանա 3 փուլով։ • Առաջին փուլը կանցկացվի quizizz.com կայքի միջոցով։ • Երկրորդ և երրորդ փուլերը կհամապատասխանեն հեռուստախաղի ձևաչափին։ Խաղի վերջում մասնակիցները կստանան հավաստագրեր, իսկ հաղթողը՝ պատվոգիր և այլ խրախուսումներ։